

ԿՐԹՈՒԳԻԿ ԸՆԹՈՒԳՐԻՆԳՆԵՐԻ ԲՈՒՅՆՄԱՐԵՐ

« Պուտարական գետնութիւն » (Magyar Allam) անուն օրաթիւթիւն — եւ իրմէն անէն ըլլով ուրիշ լրագիրներուն — մէջ յաջորդ Տեառքերական ու շատ մտադրութեան արժանի յօդուածը կը կարդանք :

« Պուտարէլը քաղաքը բաւական թուով կաթողիկէայ Տայ գերդաստան կայ . որ մանաւանդ Գրանսիւրուանիպէն շարունակ հոս գաղթող Հայոց ձեռքը , ժորդինակ բազմանալու վրայ է . այնպէս որ — գրեմակի աղագու — Հայք Պուտարէլթի մէջ , շատոնց գեղեցիկ եկեղեցի մ'ունենցող Միանձնականաց (uniar) հասարակութենէն շատ աւելք բազմաթիւ են : Գլխաւոր ու թագաւորանիստ քաղաքը գանուող կաթողիկէ Տայ գերդաստաններու անուններէն , միայն վերիվերոյ Տաշուով մը — այնպէս , ինչպէս որ մտքերինս կու գայ — յաջորդները կրնանք կարգաւ հոս շարել . Բագրուպան , Բերդիան , Բոք , Գուպուկո , Գարաշնի (կոմսական գերդաստան) , Գորդար , Գեպէր , Գրիւշայ , Գովրիկ , Գեօրէթ , Թոտորթի , Եօզուպի (քանի մը ընդհանրէր) , Երանոս , Իսեգուսի , Լասլոֆու , Լուգուշ , Կաղաղկ (քանի մ'ընտանիք) , Կորչայ , Կորովէ , Զարան , Ճորեպին , Ճրագեան , Մալի , Մարգովիշ , Մորնար , Կոզմագ , Պոկասնիթի , Պուանցի , Տայպուգագ , Տանիւշ , Միմայեան , Պորգուշ , Քոկուրեան , Օնգովի , եւ այլն : Եթէ որ հոս տեսն մտադրիս ինչպիսի 34 գերդաստանի անուններուն վրայ , միջինը հաշուելով միայն հինգ հինգ անդամ դնելու ըլլանք , սանց թիւը 150ը կ'անցնի , մինչդեռ Պուտարէլթի Միանձնականաց հասարակութեան անդամներն , ինչպէս գիտնիք 100էն նուազ են , ի վերայ այսր ամենայնի , ինչպէս ըսինք , գեղեցիկ եկեղեցի մ'ունին : — Ախտս որ ապահով յայտարարութեան (Adgabe) պակասելով ի վիճակի չենք , եւ ոչ իսկ մեքաւորագետն Հայոց թիւը գիտնալ : Մակայն թէ որ ասոնց թիւը 1000ի ալ գնելու ըլլանք , կարծենք թէ չենք սխալուր : — Զիարդ եւ իցէ , տարակոյտ չկայ , որ Պուտարէլթի Հայք , ազգային կանոնաւորեալ կաթողիկէայ հասարակութիւն մը կազմելու ի վիճակի կ'ըլլային , թէ որ Նեոլուսուդայի (Ujvidék) եկեղեցական եկամուտը Պուտարէլթ քաղաքը փոխադրուէր , ու փոքր ժողովածոյք մ'ալ իրենց մէջն ընկելով նոր Տայ կաթողիկէայ կարգաւորեալ եկեղեցի մը պիտի կարենային հիմնարկել :

Առ այժմ , ասոր հետ ի մերձուստ յարաբերութիւն ունեցող պարագայի մը մտադիր

ընել կ'ուզենք զանոնք , որ բաժանակից են (deklodöket) այս բանիս : Մէկ երկու տարեան մէջ Պուտարէլթ քաղաքն , իրեն ինամակայ (patron) եղիսարեթուպոլիս քաղաքաբաժնին համար եկեղեցի մը կը կանգնէ : Ամենէն աղէկն ան կ'ըլլար , որ հիմնական եկեղեցին — փոխանակ կործանելու — յանձնէր ազգասէր ուղղափառ Հայոց . եւ ասով գլխաւոր քաղքիս մէջ կաթողիկէայ արարողութեան մէկ նոր աղբիւր մըն ալ կը բացուէր : Արեւելքի հետ հաղորդակցութեան մէջ եղող թու մեզի յաճախ այցելութիւն ընող Հայոց համար : Տարակոյտ չկայ , որ այս բանն շատ յարմար քալլ մը կ'ըլլար : Հունգարիայի գլխաւոր ու թագաւորանիստ քաղաքն աշխարհաքաղաքաց կարգը բարձրացնելու . եւ միանգամայն գեղեցիկ ձանաղուութիւն (Anerkennung) մը արդարակորով ու պատուաւոր կաթողիկէայ Տայ հայրենակիցներուն , որոնք արժանի են , որ շուրջ 1895ին հազարամեայ յորելնին առթիւն իրենց յատուկ եկեղեցին ունենան : Անտարակոյտ եկեղեցական - քաղաքական կանոնատուր (massgebung) շրջանին մէջ իրաւացի պիտի համարուին համառուելու հաստեղ յառաջ բերուած ու բուռածները : — Ա ինննայի Տայ կաթողիկէայ Մեխիթարեան Միաբանութեան Արքեպիսկոպոսն ու Ընդհանրական Արքան՝ շատ հասանակու է , թէ պիտի բարեհաճին որ Նեոլուսուդայի ժողովրդպապետական եկեղեցւոյն եկամուտը՝ գլխաւոր քաղաքը փոխադրուի , (որովհետեւ ժամանակ անցնելով՝ հոն տեղի հաւաստեցեալք պէն քաղքէն հեռացած գացած են) : Գրանսիւրուանից Հայք ալ բնականապէս — այս բանոս իրենց յատուկ շահն ըլլալով — սիրով պիտի ընդգրկին այս բանն , ու պիտի օգնեն այս յատուկագծին յաջողելուն : Եւ այսպէս յուսալի է , որ Պուտարէլթին — երկրին ծոցին — մէջ հունգարական աշխարհակալութեան (honfoglalás) հաղաբանեալ հանդիսին , ըսա կաթողիկէայ Տայ արարողութեան ալ աստուածային պաշտամունք պիտի կարենան կատարելի , զոր Արեւելքէն եկող այցելուներուն բաւական նշանաւոր մէկ մասն , իւր ցեղին սեպական աստուածպաշտութեամբն ու ջերմեանարութեամբն իւր յատուկ լինուաւ պիտի լսէ ու մտիկ ընէ :

